ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/11Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի մայիսի 11-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/11Հ պայմանագրում 2019 թվականի նոյեմբերի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1617-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	2019թ. համար լրացուցիչ ֆինանսական միջոցի տրամադրում և առաջանցիկ շինարարական աշխատանքների իրականացման նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և Պայմանագրի 4.1.1 և 7.3 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

11.05.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/11Հ գնման պայմանագրի

ք. Երևան << 29 >> նոյեմբերի 2019թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Գողթն>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Հովակիմյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 14.11.2019թ. N 1617-Ն որոշումը, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 11.05.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/11Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի 21.01.2019թ. կնքված համաձայնագիր N 3-ի

ա) 1.1 կետում <<1 358 200 (մեկ միլիոն երեք հարյուր հիսունութ հազար երկու հարյուր)>> թիվը և բառերը փոխարինել <<1 783 200 (մեկ միլիոն յոթ հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր)>> թվով և բառերով,

բ) վճարման ժամանակացույցում <<դեկտեմբեր>> և <<Ընդամենը տարի>> սյունակների <<1 358 200>> թվերը փոխարինել <<1 783 200>> թվերով,

գ) 1-ին կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝

<<1.3 Համաձայնագրի գնից մինչև 425 000 (չորս հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամը Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Գողթն>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ք.Երևան, Վ.Վաղարշյան 14 բն.4
կառավարական տուն 3	<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1570023024930100
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00010182
Հ/Հ 900011012599	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Ա. Հովակիմյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.